



Գիտե՞իր, թե...  
 Այս յատուկ ագարակը ունի 150 չափահաս ջայլամ եւ 500-է աւելի փոքր ջայլամներ: Այս բոլոր թռչունները բացօթեայ կը խնամուին:  
 Ծնունդի ժամանակ ջայլամին ճուտը շատ դիւրաբեկ կ'ըլլայ: Իրենց ցանկապատին մէջ գետեղուած տաքցնող լամբերու շնորհիւ՝ ագարակապանները շերմաստիճանը միշտ 25-ի վրայ կը պահեն:  
 Ամէն առտու ագարակապանները ջայլամներուն կը բերեն անոնց նախաճաշը՝ բոյսի տեսակ մը եւ եգիպտացորեն: Ջայլամները կը սիրեն նաեւ ուտել պզտիկ քարեր, որոնք կը ծառայեն ուտելիքները իրենց ստամոքսին մէջ տրորելու եւ մարսողութիւնը դիւրացնելու:

Էգ ջայլամը կ'ածէ մօտաւորապէս վաթսուն հաւկիթ՝ Ապրիլէն Գոկտեմբեր երկարող շրջանի: Ջայլամի հաւկիթ մը կը կշռէ 1.5 քիլօ, այսինքն այս հաւկիթով շինուած ձուածեղ մը հաւասար է հաւու 24 հաւկիթներով շինուած ձուածեղի մը: Ջայլամի այս հաւկիթները կը պապրուին եւ կը ներկուին խանութներուն մէջ իբրեւ յուշանուէր ծախուելու գբօսաշրջիկներուն:

## ՄԵԾ ԹՌՉՈՒՆ, ՊՁՏԻԿ ՈՒՂԵՂ

Հարաւային Ափրիկէի Փըթի Քարու անապատին մէջ կը գտնուի Ուտշուրն քաղաքը, որ ջայլամի եւ անոր փետուրին միջազգային մայրաքաղաքն է: Հոն բազմաթիւ ագարակներ կը գբաղին այս գարմանալի թռչնագփն բուծանելով:

Ագարակները շատ ընդարձակ են, որովհետեւ աշխարհի ամէնէն մեծ թռչունը, մեծ տարածքներու պէտք ունի տեղափոխուելու համար: Ագարակները բաժնուած են ցանկապատերով, ուր ջայլամները խմբուած են ըստ իրենց տարիքին: Այս բաժանումը երիտասարդ եւ աւելի տարիքոտ թռչուններուն միջեւ խլրտումներէ խուսափելու միջոց մըն է նաեւ: Նոյնիսկ եթէ ջայլամը վայելուչ եւ արագ է, ան շատ հնարամիտ չէ: Անոր ուղեղը շատ պզտիկ է: Օրինակի համար եթէ մենք անոր գըլխուն վրայ տոպրակ մը անցընենք, ան հանդարտ կը մնայ, որովհետեւ կը կարծէ, թէ ինք անտեսանելի դարձած է:

Հարաւային Ափրիկէն աշխարհի գլխաւոր ջայլամ բուծանող երկիրն է: Ագարակապանները զանոնք կը բուծանեն անոնց համեղ միսին (20 առ հարիւր) ու մորթին համար (70 առ հարիւր), որուն կաշին կը ծառայէ շինելու ձեռքի պայուսակներ կօշիկներ եւայլն, իսկ անոնց փետուրներուն (10 առ հարիւր), այս փետուրները կը ծառայեն գարդարելու հագուստներ, գլխարկներ, նորոյթ առարկաներ:



Ջայլամը կրնայ վազել մինչեւ ժամական 70 քմ. արագութեամբ: Կարգ մը ագարակներ նոյնիսկ անասունները վարող «ծիւղերներով» ջայլամի մրցումներ կը կազմակերպեն այցելուները գբաղեցնելու համար:

19-րդ դարու վերջաւորութեան փետուրներու առեւտուրը կը զարգանայ, որովհետեւ մեծ պահանջ կայ: Այդ ժամանակաշրջանին փետուրին արժեքը ոսկիի արժեքին մօտ էր, յատկապէս՝ ճերմակ փետուրը, որովհետեւ կարելի էր գայն ներկել բոլոր գոյներով: Մինչեւ հիմա մեծ դերձակներ գայն կը գործածեն իրենց կարելիք հագուստներուն եւ գլխարկներուն վրայ գետեղելու համար:

ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵՆԱՆ  
 ՆԿԱՐԱՉԱՐՈՒՄԵՑ՝ ՈՒՅՖԻ ՔԵՇՈՒՄԵՆԱ



# Micro Art Թանգարան



Եթե մանր իրեր կը սիրեք, անոնց կարելի է ծանօթանալ Micro Art թանգարանի մէջ (Երեւան, Աբովեան 8 հասցեին):

Այնտեղ դուք կը տեսնեք օրինակ՝ բրինձի կիսուած հատիկի վրայ նկարուած պատկեր, ասեղի անցքի մէջ տեղադրուած քանդակ եւ այլն:

Այս գաղափարի հեղինակը Էդուարդ Տեր-Ղազարեանն է, ան հետագային իր թռուիկին հետ շարունակած է այս աշխատանքը:

Միտքը Էդուարդ Տեր-Ղազարեանի մօտ առաջին անգամ ծագած է, երբ անոր ընկերը խընդրած է փոքրիկ աղջկան համար ջութակ մը պատրաստել, քանի որ երեխան 4 տարեկան էր եւ բոլոր ջութակները իրեն համար շատ մեծ էին: Ան ջութակը կը պատրաստէ եւ կը յանձնէ ընկերոջը: Սակայն յետոյ, Տեր Ղազարեան կը մտածէ, որ կարելի է ջութակը չափերով աւելի պզտիկցնել եւ այնքան կը պզտիկցնէ, որ կը հասցնէ շատ փոքր չափերու: Դժուար է հաւատալ բայց ան կրցած է գայն նուագել:

Էդուարդ Ղազարեան նաեւ զինագործ է պատերազմի մասնակից ըլլալով պատրաստած է զէնքի տեսք ունեցող երաժշտական գործիք մը, որ իր մէջ կը ներառէ մօտ 30 երաժշտական գործիքներ: Ան ըսած է, թէ գործիքը զէնքի ձեւով ստեղծած է՝ փաստելու, որ զէնքով ոչ միայն կարելի է կրակել այլեւ նուագել: Իսկ ամենագարմանալին այն է, որ ան կրցած է ստեղծել ասեղի անցքին մէջ շարժող քանդակ մը:

Այցելեցե՛ք այս գարմանահրաշ թանգարանը:



Նիւթը գրեց՝  
ՀԱՅԿԱՇԵԱՐԳ-ի հիմնադիր  
Արեգի Տաղլեան  
(11 տարեկան)



## Հակահիշներ Կրնա՞ք գտնել

Ձախ կողմի սիւնակին իւրաքանչիւր բառը միացո՛ւր աջ կողմի սիւնակին իր համապատասխան հակահիշին:

- |          |            |
|----------|------------|
| նշանաւոր | անպետ      |
| սկիզբ    | վայրի      |
| պիտանի   | աննշան     |
| նեղ      | վերջ       |
| ընտանի   | անձնագոհ   |
| պաշտելի  | տգետ       |
| մասնակի  | ընդարձակ   |
| անձնատեր | անշուք     |
| զարգացած | ատելի      |
| փառաւոր  | ամբողջական |

## Պակսող թիւը

Կրնա՞ք գտնել իւրաքանչիւր շարքի չգրուած թիւը, ունենալու համար ճիշդ հաւասարութիւն մը:

- 25 x 8 x ..... = 100
- 35 + 24 + ..... = 80
- 125 - ..... - 40 = 50
- 540 ÷ 9 ÷ ..... = 2
- 150 - ..... + 20 = 10
- 360 ÷ 60 x ..... = 90

Ներկէ՛ նախասիրած գոյներովդ:





# ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

## Յովհաննես Թումանյան



Ժամանակին կատուն ճոն էր, իսկ շունն ալ գըլխուն գդակ չունէր: Միայն չէմ գիտեր, թէ ուրկէ-ուր անոր ձեռքը անցած էր գառնուկի մորթ մը: Ձմեռնամուտին շունը այս մորթը առած եկաւ կատունը քով:

- Բարի յաջողութիւն, վարպէ՛տ Փիսօ: Գլուխս կը մսի, Աստուծոյ սիրոյն, ա՛ն այս մորթը եւ ինծի համար գըլխուս յարմար գդակ մը կարէ՛: Վարձքիդ համար մի՛ մտահոգուիր: Կը խնդրեմ, որ շատ չուշացնես:

- Աչքիս վրայ, քեռի՛ քուչի, եղածը պզտիկ գդակ մըն է, խոշոր մուշտակ մը չէ: Որպէսզի գոհ մնաս, Ուրբաթ օր եկո՛ւր, տա՛ր: Իսկ դրամի մասին ամօթ է նոյնիսկ խօսիլ: Եղածը ի՛նչ է որ, ա՛յ մարդ, ընդամենը գդակի մը վարձքը:

Ուրբաթ օրը քեռի քուչին, վարպէտէն շատ առաջ, մերկ գլուխը ծանրօրէն շարժելով, կատունին խանութին սեմին կանգնեցաւ:

- Վարպէտը ո՞ւր է, գդակս ո՞ւր է:

- Քիչ մը սպասէ՛, հիմա կու գայ:

Վարպէտը եկաւ՝ մուշտակ հագած, տեսաւ շունը, պէխին տակէն ինքնիրեն մրթմրթաց, ապա պոռաց անոր վրայ:

- Յուրտէն մեռա՛ր... ա՛յ տնաշէն, չես ձգեր, որ շունչ մը քաշեմ: Դիւրին բան չէ՛, մորթը դեռ նոր ջուրին մէջ դրի, որպէսզի կակուղնայ ու սկսիմ կարել:

- Դե՛հ, բարեկամ, այդպէս ըսէ, ինչո՞ւ կը բարկանաս: Դրամ տուի, ուրեմն ժամանակի՛ն կարէ, այլա-

պէս ըսէ՛ վա՛ղը գամ: Թէ՛ խօսք կու տաս, թէ՛ չես կարեր, թէ՛ կը խօսիս, թէ՛ վրաս կը գոռաս, թէ՛, թէ՛, թէ՛... քանի՞ անգամ ու գամ,- ըսաւ քուչին ու նեղացած հեռացաւ բաց գլուխով:

Ուրիշ անգամ մըն ալ եկաւ, նորէն գդակը պատրաստ չէր: Այս անգամ իրար ինկան. ա՛լ անպատիւ, անկիրթ խօսքեր, ա՛լ հայր ու մայր, ա՛լ գող Փիսօ՛, ա՛լ ճաղատ Շո՛ւն:

Վեճը հասաւ դատաւորին:

Մինչ Շունը այսպէս կ'երթար-կու գար, օր մըն ալ վարպէտ Կատուն սնանկացաւ եւ գիշեր մը գլուխը առած՝ կորաւ-գնաց ու այդ երթալն էր...:

Այդ օրէն մինչեւ այսօր ալ Շունը այս բանը չէ մոռցած, այլ միտքը պահած է միշտ, եւ ուր որ հանդիպի Կատունին, վեր կը ցատկէ, վրան կը վազէ եւ կը պահանջէ իր մորթը: Իսկ աներես Կատուն յանկարծ ետ կը դառնայ ու բարկացած կը պոռայ.

- Մորթը դեռ նոր ջուրին մէջ դրի, որպէսզի սկսիմ կարել:

**Բառեր եւ բացատրութիւններ**  
ճոն- մուշտակագործ, գլխարկ ու մուշտակ կարող:

Գդակ- գլխարկ  
Սնանկանալ- ունեցածը վնասել ու կորսնցնել:



# ՄԵՐ ՀՉՕՐ ՍԻՐՏԸ

Մեր ծնած վայրկեանէն իսկ մենք կը սորվինք գործածել մեր այս հզօր մեքենան՝ մեր մարմինը. քալել, լողալ, խօսիլ, մտածել, քնանալ: Ասոնք բացառիկ կարողութիւններ են, որոնք կարելի կը դառնան շնորհիւ մեր սրտին եւ ուղեղին նման գործարաններու:

Սիրտը՝ գործարաններու թագաւորը  
Սիրտը մկան մըն է: Ան է, որ ամենէն շատը կ'աշխատի: Գիշեր-ցերեկ կը բանի արիւնը մարմնին մէջ դարձնելու համար: Երբ ան դադորի բանելէ, մարդ արարածը չի կրնար ապրիլ:

Սիրտը Առաջին Կարգի Մեքենայ Մը  
- Ան շատ ճարպիկ է: Ան ինքնավար մկան մըն է, որ մինակը կը բանի՝ առանց մեր ուշադրութեան:  
- Ան գիտէ պատշաճիլ: Երբ մենք աւելի ուժ կը սպառենք, ան աւելի արագ կը տրոփէ, աւելի արիւն հայթայթելու համար, եւ կը դանդաղի, երբ մենք կը քնանանք:  
- Ան հզօր է: Ան արիւն կը քաշէ եւ կը մղէ մէկ վայրկեանուան մէջ 70 անգամ: Մէկ օրուան ընթացքին ան կը բաբախէ 100 հազար անգամ: Եւ մինչեւ 3 միլիառ անգամ ամբողջ կեանքի մը ընթացքին:  
- Ան դիմացկուն է: Ան անդադար գիշեր-ցերեկ կը բանի արդէն մեր կեանքի առաջին շաբաթներէն մեր մօր փորին մէջ, եւ երբեմն՝ մինչեւ 100 տարեկան:  
- Մեր Սիրտը ունի տանձի մը ձեւը: Միւս մկաններուն նման, որքան մենք զայն աշխատցնենք այնքան ան կը մեծնայ:

Ինչո՞ւ սիրտը պէտք է անպայման արիւն դարձնէ մեր մարմնին մէջ  
Արիւնը կեանք է: Անիկա կը փոխադրէ թթուածինը եւ ուտելիքի մասնիկները, որոնց մարմինը պէտք ունի կենդանի մնալու համար: Անոր ճերմակ գնդիկները մեզի հիւանդութիւններէն կը պաշտպանեն, իսկ *փլաքեթները* մեր մարմնին կ'օգնեն բուժուելու, երբ անիկա կը վիրաւորուի:

- Առանց սրտի կամ տկար սրտով մը ապրիլը անկարելի է: Դեղեր գոյութիւն ունին, սակայն երբեմն պէտք է վիրաբուժութեան դիմել, հիւանդ սիրտը ուրիշ սրտով մը փոխարինելու համար:

1967 թուականին, հարաւափրիկեցի բժիշկ մը՝ Զրիսթիան Պեռնարտ, յաջողեցաւ հիւանդ սրտով մարդու մը սիրտը փոխարինել մահացած անձի մը սրտով:

- Երբ մենք զօրաւոր յուզում մը կ'ապրինք, մեր սիրտը աւելի արագ կը տրոփէ: Հետեւաբար երկար ժամանակ մարդիկ մտածած են, որ սիրտը «կը շինէր» մեր զգացումները: Սակայն մենք այժմ գիտենք, որ սիրտը ոչինչ «կը շինէ»: Ամէն ինչ տեղի կ'ունենայ մեր ուղեղին մէջ, ճիշդ է, որ սիրտը զգացումներ «չի շինէր», սակայն էական է կեանքին համար:

Հետեւաբար մարդիկ կը շարունակեն զայն կապել մեր կեանքին մէջ ամենէն կարեւոր տարրին, զգացում մը, որ մեզի իսկապէս կենդանի զգալ կու տայ՝ սերը:

